

Բանալի բառեր՝ ազգային տնտեսություն, մրցունակություն, պարզ և բարդ ցուցանիշներ, տնտեսական արդյունավետություն, տեխնոլոգիական զարգացածություն, մարդկային ռեսուրսներ, կառավարման արդյունավետություն, արտադրության արդյունավետություն:

ՀՏԴ 338.2

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսության թեմա՝
ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրները

Դիանա ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՊՏՀ

մակրոէկոնոմիկայի ամբիոնիի ասպիրանտ

Գիտական ղեկավար՝
Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ
 Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ազգային տնտեսության մրցունակությունը ուսումնասիրության առարկա է դարձել համեմատաբար վերջերս: Սակայն, ինքնին մրցունակություն տերմինը տնտեսության մեջ սկսել է գործածել դեռ Ադամ Սմիթը՝ «Յետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների վերաբերյալ» աշխատությունում¹, որտեղ նա առանձնացնում է չորս կարևոր գործոն՝ հող, կապիտալ, բնական ռեսուրսներ և աշխատանք, որոնք որոշում են պետության բացարձակ առավելությունը միջազգային առևտրում և ապացուցում ազգային տնտեսության բաց լինելու առավելությունները: Նրա գաղափարները վերջնական եզրույթի հանգեցրեց Դավիթ Ռիկարդոն, ով ներմուծել է «պետությունների համեմատական առավելություն» հասկացությունը: Ռիկարդոյի գլխավոր ձեռքբերումը դարձել է այն դրույթը, որ ազգային տնտեսությունը եկամուտ է ստանում ոչ միայն ներքին առևտրից, այլև երկու մասնակից երկրների համար փոխադասված ապրանքափոխանակությունից՝ նույնիսկ այն ժամանակ, երբ մի երկիր ունի բացարձակ առավելություն մյուս երկրների արտադրության բոլոր ոլորտներում:

Աղյուսակ 1.
Ռեզրեսիոն վերլուծության արդյունքները²


Կախված Փոփոխական	ՀՄԻ	ՀՄԻ	Դիսպերսիան
Հաստատուն	Հաստատուն	39.69674	2.970021
Հաստատություններ		0.601846	0.037675
	Հաստատուն	34.23496	6.065363
Գործարարության զարգացվածություն		0.540011	0.06205
	Հաստատուն	1.372566	0.827135
Ֆինանսական շուկայի զարգացվածություն		0.6838	0.18348
	Հաստատուն	87.50738	14.79392
Մակրոտնտեսական կայունություն		-0.013278	0.1737
	Հաստատուն	281.083	91.18403
Շուկայի չափը		-1.689956	0.791255
	Հաստատուն	95.09898	12.60975
Աշխատուժի շուկայի արդյունավետություն		-0.177169	0.249882
	Հաստատուն	46.96594	16.18621
Առողջապահություն և առաջնային կրթություն		0.444077	0.180485
	Հաստատուն	65.23715	2.118239
Ապրանքային շուկայի արդյունավետություն		0.274486	0.025615
	Հաստատուն	45.64262	8.933958
Տեխնոլոգիական պատրաստվածություն		0.467938	0.100988
	Հաստատուն	26.27465	11.15505
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում		0.760118	0.139932
	Հաստատուն	-1.457143	48.66658
Ենթակառուցվածք		1.071429	0.592693
	Հաստատուն	35.43776	15.80502
Նորամուծություններ		0.500611	0.154045

¹ Смит Адам "Исследование о природе и причинах богатства народов", М. СОЦЭК-ГИЗ, Т3, 1962г., стр. 345, стр.684

² Աղյուսակում սև գույնով նշված հենայունները մեծ ազդեցություն ունեն մրցունակության դիրքի վրա, կարմիրով նշվածը՝ գրեթե չեն ազդում համաթվի ձևավորման վրա, իսկ դեղինով ընդգծվածը միջին չափով են ազդում:

Ժ.Վալտերը, համաձայնվելով Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից միջուկային բնորշման հետ, այն համարում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն բարձրացնող կարևորագույն գործոն, հավելելով, որ դրա վրա կարևոր ազդեցություն ունեն նաև մակրոտնտեսական կայունությունը, պետական կառավարման արդյունավետությունը և տեխնոլոգիական զարգացածությունը³:

Գծապատկեր 1. ԱՏՄ կառուցվածքը



Տնտեսության մրցունակության տեսության զարգացման գործում մեծ ներդրում ունի Հարվարդի Բիզնես դպրոցի պրոֆեսոր Մ.Պորտերը⁴: Նա համարվում է ոչ գնային գործոնների կողմնակից և գտնում, որ միջազգային մրցունակության գործում որոշիչ դեր է կատարում ոչ միայն գինը, այլ նաև այլ գործոններ:

Մեր կարծիքով տնտեսության մրցունակությունը ցույց է տալիս տնտեսական քաղաքականության հաստատությունների արդյունավետությունը, որոնք ի հայտ են գալիս մարդկային, կապիտալ և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությամբ՝ երկար ժամկետով ապահովելով բնակչության բարեկեցությունը:

Սահմանումից պարզ է դառնում, որ երկարաժամկետում տնտեսության մրցունակության բարձր դիրք գրավելու համար շեշտը պետք է դնել տնտեսական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության վրա:

Քննարկվել և Էկոնոմտրիկ մոդելի միջոցով գնահատվել է ՀՏՖ-ի (Համաշխարհային տնտեսական ֆորում) երկրի մրցունակությունը բնորոշող 12 գործոնները:

Էկոնոմտրիկ մոդելի միջոցով գնահատվել է ՀՄԻ-ի (Համաշխարհային մրցունակության ինդեքս) վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Ըստ այդմ, նախքան ռեգրեսիայի իրականացնելը կատարվել է շարքերի ստացիոնարության թեստ (Դիկի Ֆուլերի հայտանիշի միջոցով): Գնահատվել է ՀՄԻ-ի և մնացած գործոնների միջև առկա գծային կապը.

$$y = a + bx + e,$$

որտեղ y -ը կախյալ փոփոխականն է՝ ՀՄԻ-ն,

a - ազատ անդամը,

³ В. М. Коновалов «Иновационная сага», 2013, Москва, стр. 56-57, стр 292

⁴ Портер М. Конкуренция. пер. с англ.-М.: Издательский дом <<Вильямс >> 2000 г., стр.169-170, стр. 453

բ-անկյունային գործակիցը, որը տվյալ դեպքում ցույց է տալիս, թե ինչքան է տվյալ գործոնի ազդեցությունը ՅՄԻ-ի վրա: Արդյունքներն ամփոփելիս պարզ է դառնում, որ ՅՄԻ-ի վրա առավել էական ազդեցություն ունեն.

1. Հաստատությունները (մեկ միավոր դիրքով բարելավումը բերում է 0.6 կետով ՅՄԻ-ի դիրքի բարելավմանը. t վիճակագիրը՝ 15.97, R բառակուսին՝ 0.97),

2. Մակրոտնտեսական կայունությունը (մեկ միավոր դիրքով բարելավումը բերում է 0.7 կետով ՅՄԻ-ի դիրքի բարելավմանը. t վիճակագիրը՝ 15.97, R բառակուսին՝ 0.78, Դարբին-Վաթսոն հայտանիշը՝ 1.53),

3. Գործարարության զարգացածությունը (մեկ միավոր դիրքով բարելավումը բերում է 0.5 կետով ՅՄԻ-ի դիրքի բարելավմանը. t վիճակագիրը՝ 8.7, R բառակուսին 0.90, Դարբին-Վաթսոն հայտանիշը՝ 1.75),

4. Տեխնոլոգիական պատրաստվածությունը (մեկ միավոր դիրքով բարելավումը բերում է 0.46 կետով ՅՄԻ-ի դիրքի բարելավմանը. t վիճակագիրը՝ 4.6, R բառակուսին՝ 0.72, Դարբին-Վաթսոն հայտանիշը՝ 1.7)

5. Ապրանքային շուկայի արդյունավետությունը (մեկ միավոր դիրքով բարելավումը բերում է 0.27 կետով ՅՄԻ-ի դիրքի բարելավմանը. t վիճակագիրը՝ 10.71, R բառակուսին 0.92, Դարբին-Վաթսոն հայտանիշը՝ 1.3):

Ռեգրեսիոն վերլուծությանը արդյունքների հիման վրա կազմվել է ազգային տնտեսության մրցունակության նոր մոդել:

Ազգային տնտեսության մրցունակության գնահատումը բաժանվում է 5 կատեգորիայի՝ տնտեսական արդյունավետություն, տեխնոլոգիական զարգացածություն, մարդկային ռեսուրսներ, կառավարման արդյունավետություն և արտադրության արդյունավետություն: Սողելը կառուցելու համար օգտագործվել են պարզ և բարդ ցուցանիշներ: Բարդ ցուցանիշը ստացվում է Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Մենեջմենթի զարգացման ազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և այլ միջազգային կառույցների ցուցանիշների հիման վրա: Իսկ պարզ ցուցանիշ ստանալու համար նախատեսվել է սոցիոլոգիական հարցում, որը պետք է գնահատել 0-10 միավորային համակարգով, որտեղ 0-ն ամենացածր շեմն է, 10-ը՝ ամենաբարձր: (Տես՝ գծապատկերը):

Հաշվարկը հիմնված է ցուցանիշի հաջորդական միավորների վրա: Ըստ կատեգորիայի, թվաբանական թվանշանը օգտագործվում է անհատական ցուցանիշները համախմբելու համար, մինչդեռ բարձր միավորի մակարդակների համար կիրառվում են յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված կշիռներ: Բարձր միավորի մակարդակով, այսինքն, կիրառված կշիռները չեն ամրագրված եւ կախված յուրաքանչյուր երկրի զարգացման փուլից:

Ստանդարտացման մեթոդը օգտագործում ենք, որպեսզի համադրենք բարդ և պարզ ցուցանիշը: Բոլոր բարդ արժեքները ստանդարտացվել են ամենացածրը՝ 0, իսկ ամենաբարձրը՝ 10 միավորով, որի բանաձևը հետևյալն է.

$$S = 10 \cdot \frac{(\text{երկրի ընդհանուր ցուցանիշ} - \text{պարզ նվազագույն})}{(\text{պարզ առավելագույն} - \text{պարզ նվազագույն})}$$

որտեղ S -ստանդարտացման միավորն է,

պարզ նվազագույն և պարզ առավելագույն երկրների առավելագույն և նվազագույն գնահատականներն են:

Ազգային մրցունակության համադրելի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{ԱՏՄ} = W_1 \sum_{j=1}^{n_1} m_{1j} S U_j + W_2 \sum_{j=1}^{n_2} m_{2j} S Q_j + W_3 \sum_{j=1}^{n_3} m_{3j} Y U_j + W_4 \sum_{j=1}^{n_4} m_{4j} U \Omega_j + W_5 \sum_{j=1}^{n_5} m_{5j} U U_j$$

որտեղ՝ ԱՏՄ- ազգային տնտեսության մրցունակության ցուցանիշն է

W_i ՝ i -երրորդ ցուցանիշի գնահատականն է ($i=1,2,3,4,5$)

m_{ij} ՝ j -երրորդ ենթացուցանիշի գնահատականն է ($j=1,2,3 \dots n_i$)

$S U_j$ ՝ տնտեսական արդյունավետության j -երրորդ ենթացուցանիշի ստանդարտիզացված հանրագումարն է

$S Q_j$ ՝ տեխնոլոգիական զարգացածության j -երրորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարն է

$Y U_j$ ՝ մարդկային ռեսուրսների j -երրորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարն է

$U \Omega_j$ ՝ կառավարման արդյունավետության j -երրորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարն է

$U U_j$ ՝ արտադրության արդյունավետության j -երրորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարն է:

Ներկայացվել է 19.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.